թեան մէջ պրպտել է նա այդ բոլորը եւ անցուցեր իր անզուգական վրձինին տակ, հառաչելով ու արտասուելով...

Ահա Ռշտունեաց ձորերու եւ «Վռչիկնեբու» հակիրճ նկարագրութիւնն ալ՝ «Կայծեր»ի երկրորդ հատորին մէջ.

... «Անցնում էինք Արտօսի ոլորապտոյտ ձորերով, նեղ փապարներով եւ մթին կիրճերով: Մարդ կարող էր բոլորովին կորչել, անհետանալ... Ռշտունեաց գաւառի լեռնային ցանցը... մի մեծ ծուղակ է, որ, կարծես, այդ քմահաճ լեռները պատրաստել են մարդիկ որսալու համար: Մենք խարխափում էինք այդ ծուղակի մէջ: Երբեմն հանդիպում էին մթին անտառներ... ուղեւորների խմբեր, որ գնում էին մերձակայ արօտատեղիները, իրանց անասունների մօտ: Նայելով այդ անտառներին, նայելով այդ մարդիկներին, ինձ թւում էր, որ այդ վայրենի, լեռնային երկրում ամէն ինչ նոյնպէս խիստ էր, որպէս շրջակայ բնութիւնը: Վաղեմի դիւցազունների փոխարէն՝ ապրում էր մի խոշոր ժողովուրդ. վաղեմի հրսկայ անտառների փոխարէն՝ ամեհի ծառատունկ: Բայց անցեալ փառքն ու մեծութիւնը մաշել, տրորել էր ժամանակը... Միայն իր վեհութեան մէջ մնացել էր անխորտակելի Արտօսը:

... Մտածում էի, ե՞րբ պէտք է դուրս գանք այդ մթին վիհերից ու վիրապներից. գոնէ լոյս լինէր: Հորիզոնը ամէն կողմերից փակուած էր բարձր լեռներով: Հեռուն չէր երեւում: Նայում էի դէպի երկինք, ձիւնագոյն ամպերը լողում էին օդի մէջ: Նրանց մի կողմը ոսկու գոյն էր ստացել: Երեւի արեւը ծագել էր: Բայց մեր գտնուած ձորերի մէջ դեռ տիրում էր գիշերային խաւարը...

... Իմ յոգնածութիւնը բոլորովին փարատուեցաւ, երբ բարձրացանք մի սարաւանդի վրայ, երբ կրկին մեր առջեւ բացուեցաւ կապուտակ ծովը եւ երբ Ասլանը, ձեռքը մեկնելով դէպի մի հին քաղաքի աւերակները, ասաց.

— «Ահա Ոստանը»:

Այստեղ էին թափված հին ամրոցի բեկորները, որոնց քարակոյտը իմ վրայ այն տպաւորութիւնն էր գործում, կարծես դարերի կործանիչ սասանմունքից յետոյ, այժմ մի հրսկայական քարեղէն կմախք իր վիթխարի գլուխը վեր էր բարձրացրել տեսնելու թէ ի՞նչ էր կատարվել իր չորեք կողմում...

. . . . . .

... «Պէտք է ուղի ընկնել: Ես վերջին անգամ հայեացք ձգեցի աւերակների վրայ, վերջին անգամ նայեցի դէպի ծովը... Ինձ թւում էր, որ ալիքների մեղմ մեղեդիի մէջ ես լսում էի արձագանքը մի քաղցր նուագածութեան, որով Ռշտունեանց գուսանները զուարճացնում էին Վասպուրականի հզօր իշխանի ուրախութեան ժամերը: Սահում են դարեր, անցնում են ժամանակներ: Տեսարանը փոխվում է: Վարդագոյն ապակիների վարդագոյն շողքերի փոխարէն՝ հոսում են արեան վարդագոյն վըտակներ: Այլեւս ոսկեզօծ նկարների փայլը չէ, որ վառվում է արեւի նառագայթների առջեւ, — այդ հրդեհի բոցն է, որ լափում է փառքի եւ իշխանութեան բոլոր վայելչութիւնները: Լաց ու կոծ է լսվում... աղմուկը սաստկանում է կրակի լուսաւորութեան առջեւ նշմարվում է դաշոյնների փայլը... մարդիկ անորոշ ուրուականների նման խլրտում են... ոմանք ընկնում են, ոմանք կանգնում են... դահիճների կործանվող կամարները ծածկում են դիակները... Կրակը ու կոտորածը ոչնչացնում են Ղարա-Մելիքների յիշատակը... Բայց մի կին մի երեխայ կուծքին սեղմած, դուրս է սողում կրակի միջից եւ թագչում է մերձակայ անտառում... Ցետոյ թանձր ծուխը ցած է թողնում իր սեւ վարագոյրը եւ եղերական տեսարանը անհետանում է մթութեան մէջ...

Ռշտունի՞ք... նրա բնակիչները իւր մթին անտառների եւ ահարկու լեռների նման՝ կոշտ, կոպիտ եւ անխորտակելի են: Հսկայ բնութիւնը ծնել է եւ հսկայ ժողովուրդ: Այստեղ միայն կարելի է տեսնել սահմանակից Հայոց-Զորի վաղեմի տիտանների վիթխարի սերունդը, որ իր քաջութեամբ բնաւ յետ չէ մնում դրացի սասունցիներից: Զը կարելի տեսնել եւ չհիանալ այդ առողջ, կենդանի, մշտազուարթ ժողովրդով: Նա երբեք չէ թափառում, որպէս իր ծմակների մշտականաչ կիպարիսը: Նա երբեք չէ ծերանում, որպէս իր թաւուտների դարեւոր եղեւինը: Հզօր կուրծքը մերկ, զօրաւոր